

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻՑ

Հայաստանյայց Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի արևմտյան թեմը հոգևոր և մշակութային խանդավառությամբ և հետևողականորեն շարունակում է իր նվիրյալ և գիտակից ծառայությունը՝ թեմական առաջնորդ Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանի գլխավորությամբ:

Թեմից ներս գեղեցիկ ավանդություն են դարձել «Տարեկան առանձնացումները», որոնց մասնակցում են հոգևոր հայրեր, թեմական և ծխական խորհուրդների անդամներ, երիտասարդական կազմակերպության վարչական կազմի անդամներ, պատգամավորներ և այլ պատասխանատու անձինք:

Տիկնանց Միությունը նույնպես կազմակերպում է դաստիարակչական ծրագրով առանձնացում և հայ սրբուհիներին նվիրված հոգեվոր արարողություններ: Այս տարվա հոգևոր արարողությունը նվիրված է եղել Սրբուհի Խոսրովիդուխտ իշխանուհուն:

Տիկնանց Միության այս տարվա առանձնացումը տեղի է ունեցել Սանտա Բարբարայում՝ նախագահությամբ առաջնորդ սրբազան հոր: Խորհրդածության ընդհանուր թեման է եղել «Սուրբ մկրտություն»: Զեկուցումներ են տրվել հետևյալ թեմաների շուրջ.

1. «Հավատք, հույս, սեր և մկրտություն» (զեկուցող՝ Տ. Վաչե արքեպիսկոպոս).

2. «Ս. Մկրտություն» (զեկուցող՝ Տ. Գևորգ քհն. Առաքելյան).

3. «Վերստին ծնունդ» (զեկուցող՝ Տ. Վարդան քհն. Գասպարյան).

4. «Դրոշմ—Սուրբ Հոգու խորհուրդը» (զեկուցող՝ Տ. Շահե ավագ քհն. Ալթունյան):

Ծխական խորհուրդների առանձնացման ընթացքում գործադրվել է հետևյալ հայտագիրը. Տ. Արտակ ծ. վրդ. Խաչատուրյանը զեկուցել է Ս. Գրիգոր Նարեկացու կյանքի և գործունեության մասին:

Օկլենդի Ս. Վարդան եկեղեցուց Ջեյք Մարկոսյանի զեկուցման թեման է եղել՝ «Ընկերային կյանքի պայմանների ազդեցությունները ամերիկահայ համայնքների վրա»:

Տ. Վազգեն քհն. Մովսիսյանը զեկուցել է «Քավություն—ինչպե՞ս պետք է փրկվել» թեմայի շուրջ:

Տ. Արիս եպս. Շիրվանյանը զեկուցել է «Սուրբ մկրտության խորհուրդը» թեմայի շուրջ:

Վերջին զեկուցողն է եղել Ռիչարդ սրկ. Սարաֆյանը, որի զեկուցման թեման է եղել «Քրիստոս մեր ներկա կյանքի մեջ»:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ 56-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Հյուսիսային Ամերիկայի հայոց արևմտյան թեմի պատգամավորական 56-րդ տարեկան ժողովը տեղի է ունեցել սույն թվականի ապրիլի 28—30 օրերին Հոլիվուդի հայոց Ս.

Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցում՝ նախագահությամբ թեմական առաջնորդ Տ. Վաչե արքեպիսկոպոսի:

Տիկնանց Միության համագումարին մասնակցել են տասնվեց մասնաճյուղերի պատգամավորներ և ներկայացրել իրենց տարեկան տեղեկագրերը:

Փակման խոսքից և օրհնության աղոթքից առաջ առաջնորդ սրբազանը գնահատության և օրհնության վկայագրեր է հանձնել Կենտրոնական Վարչության նախորդ ատենապետուհիներին և իրենց պաշտոնները ավարտած տիկիններին:

Ներկայացված բոլոր տեղեկագրերը գնահատանքով և երախտագիտական զգացումներով են ընդունվել պատգամավորների կողմից:

Պատգամավորները ամենայն լրջությամբ և համերաշխ ոգով քննարկել են ժողովի օրակարգում դրված հարցերը և ընդունել համապատասխան որոշումներ:

Որոշվել է՝

ա. Շարունակել Մայր եկեղեցու համալիրի շինության հարմար մի հողամաս գտնելու առաջարկը:

բ. Հաստատել ամառային մի նոր ճամբարավայրի գնման առաջարկը:

գ. Բոլոր ծխերի կալվածքները արձանագրել տալ առաջնորդարանի անվան:

դ. Դարձյալ ճշտվել են արևմտյան թեմի աշխարհագրական սահմանները և այլն:

Ժողովի ընթացքում տեղի են ունեցել ընտրություններ: Ընտրվել են՝

ա. Մնայուն հիմնադրամի անդամներ.

բ. Թեմական ժողովի պաշտոնյաներ.

գ. Թեմական խորհուրդ.

դ. Հաշվեքննիչ հանձնախումբ:

Ժողովը որոշում է ընդունել արևմտյան թեմի առաջիկա թեմական 57-րդ պատգամավորական ժողովը գումարել Սան Ֆրանցիսկոյի հայոց Սուրբ Հովհաննես եկեղեցում:

Ժողովը փակվել է առաջնորդ սրբազանի օրհնության խոսքով և աղոթքով:

Նույն օրը, երեկոյան, տեղի է ունեցել պաշտոնական ճաշկերույթ, որի ընթացքում գործադրության է դրվել գեղարվեստական մի ճոխ հայտագիր: